ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գևորգ Հովիկի Մարտիրոսյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Ռազմավարական հաշվառման ներդրման հիմնախնդիրները ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ

Ռազմավարական հաշվառումը համեմատաբար նոր ուղղություն է հաշվապահական և կառավարչական հաշվառման համակարգերում: Եթե ավանդական հաշվառումը հավաքագրում և մշակում է անցյալ ժամակաշրջանի տեղեկատվությունը, որի հիման վրա կայացվում են կառավարչական որոշումներ, ապա ռազմավարական հաշվառումը հետահայաց բնույթ չունի և միտված է այնպիսի տեղեկատվության արձանագրմանը և մշակմանը, որը վերաբերում է կազմակերպությունների տեսանելի ապագային:

Ներկայումս կազմակերպություններում ռազմավարական հաշվառումը շատ դեպքերում նույնացվում է կառավարչական հաշվառման հետ, ինչով պայմանավորված ապագայում զարգացման միտումների մասով ամբողջական տարանջատված տեղեկատվությունը չի արտացոլվում: Միաժամանակ, ներկայումս հետազոտողների և տեսաբանների կողմից ամբողջական և ավարտուն տեսքի չեն բերվել ռազմավարական կառավարման մեթոդաբանությունը և դրանց ինտեգրումը ֆինանսական հաշվառման տարրերին:

Միաժամանակ, սննդի արդյունաբերության ոլորտը լինելով ամենազգայուններից մեկը ամենաարագ և ամենահրատապ կառավարչական լուծումներն է պահանջում, ինչով պայմանավորված ռազմավարական հաշվառման համակարգի ներդրման հետ կապված

խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ իրականացվող քայլերի հաջորդականությունը դրանցում առավել ընդգծված են արտահայտվում, ինչով պայմանավորված առանցքային կարելի է համարել նման հետազոտության իրականացումը ՀՀ սննդի արդյունաբերության ոլորտում:

Ռազմավարական հաշվառման քաղաքականությունը և մեթոդաբանությունը դեռևս չունեն այն ավարտուն տեսքը, որով հնարավոր կլինի ընդգծել այս համակարգի գործունեության վերջնական նպատակների և դրանց իրականացման արդյունքում ստացվող արդյունքների շրջանակը:

Գևորգ Հովիկի Մարտիրոսյանի ատենախոսությունում վերը հիշատակված հիմնախնդիրների գիտական ուսումնասիրումը, այդ շրջանակներում իրականացված հետազոտությունները և առաջարկված լուծումներն առնչվում են վերոնշյալ դիտարկումներին, որոնցով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպություններում ռազմավարական հաշվառման ներդրման հիմնախնդիրները և ներկայացնել առաջարկություններ դրանց լուծման ուղղություններով:

Նշված նպատակն իրականացնելու համար առաջադրվել են լուծման ենթակա հետևյալ խնդիրները.

- բացահայտել առանցքային գործոններ, որոնք ձևավորում են սննդարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների զարգացման ռազմավարական ուղղությունները,
- բացահայտել ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների միջև ռեգրեսիոն փոխկապակցվածություններ, որոնք կարող են երկարաժամկետ կտրվածքով ցույց տալ այդ ցուցանիշների միջև առկա պատճառահետևանքային կապերը,

- ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների հեռանկարային նպատակադրումների կատարողականի և տնտեսական գործունեության կայուն զարգացման արդյունքների հիման վրա մշակել ռազմավարական հաշվառման ներդրման հայեցակարգ,
- առաջարկել ռազմավարական հաշվառման հատուկ հաշիվներ և կրկնակի գրանցմամբ համապատասխան հաշվապահական թղթակցություններ՝ ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների գործունեության կայուն զարգացման հաշվապահական հաշվառում իրականացնելու նպատակով,
- առաջարկել «բնապահպանություն-սոցիալական վստահություն-կառավարում» (ESG) շղթայով հաշվետվողականության կառուցակարգ,
- կազմակերպությունների գործունեության ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվության համադրման դաշտի ձևավորումով առաջարկել գործարարության հավելյալ արժեքի չափելիության և ռազմավարական հաշվառման կառուցակարգ,
- ռազմավարական հաշվառման տեղեկատվական համակարգի հիման վրա առաջարկել կազմակերպությունների կայուն զարգացումը բնութագրող որակական ցուցանիշներ և դրանք օգտագործել կառավարչական որոշումները իրականացնելիս:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության գիտական նորույթն է ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպություններում ռազմավարական հաշվառման համակարգի մշակումն ու ներդրումը: Մասնավորապես.

- ՀՀ սննդարդյունաբերության կազմակերպությունների ֆինանսական արդյունքների և սպառողների եկամուտների փոխկապակցված ուսումնասիրությունների հիման վրա ձևավորվել են ոլորտի զարգացման

ռազմավարական ուղղությունները և տրվել են կանխատեսող ռեգրեսիոն գնահատումներ,

- մշակվել է կազմակերպություններում ռազմավարական հաշվառման ներդրման հայեցակարգ՝ հիմնված հեռանկարային նպատակադրումների կատարողականի վերահսկողության և տնտեսական գործունեության կայուն զարգացման գնահատման արդյունքների վրա, որը հնարավորություն է ստեղծում կազմակերպելու ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներով ինտեգրված հաշվետվողականություն,
- կայուն զարգացման հաշվապահական հաշվառում իրականացնելու նպատակով առաջարկվել են ռազամավարական հաշվառման հատուկ հաշիվներ և կրկնակի գրանցմամբ համապատասխան հաշվապահական թղթակցություններ, որոնցով հնարավորություն է ստեղծվում կազմակերպություններում ներդնելու և հաշվետվություններով ներկայացնելու «բնապահպանություն-սոցիալական վստահություն-կառավարում» շղթայով հաշվետվողականություն,
- կազմակերպությունների գործունեության ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվության համադրման դաշտի ձևավորումով առաջարկվել է գործարարության արդյունքների չափելիության ռազմավարական հաշվառման կառուցակարգ, որով հնարավորություն է ստեղծվում կիրառելու կայուն զարգացումը բնութագրող որակական ցուցանիշներ և դրա հիման վրա կայացնելու կառավարչական որոշումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը շարադրված է 123 էջի վրա՝ առանց հավելվածների, և բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններ և առաջարկություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից:

Ատենախոսության ***«Ներածություն»*** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, և այս ամենի հիման վրա ներկայացվել են հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ ***«Ռազմավարական հաշվառման ներդրման անհրաժեշտությունը կազմակերպություններում»*** գլխում ուսումնասիրվել և ներկայացվել են ՀՀ-ում սննդի արդյունաբերության ոլորտի զարգացման հեռանկարները և այդ ոլորտում առկա մարտահրավերների հիման վրա ռազմավարական հաշվառման համակարգի ձևավորման ու ներդրման հիմնախնդիրները: Ատենախոսը ներկայացրել է այս ոլորտի սերտ կապը գյուղատնտեսության ոլորտի զարգացման հետ և կատարել է առաջարկություններ՝ սննդի արդյունաբերության ոլորտի կազմակերպություններում ռազմավարական հաշվառման համակարգի ներդրման առկա մարտահրավերներին դիմակայելու նպատակով: Միաժամանակ, անդրադարձ է կատարել ռազմավարական հաշվառման համակարգի գործիքակազմի օգնությամբ տրամադրվող և մշակվող տեղեկատվության կարևորությանը կազմակերպությունների գործունեության հեռանկարային վերլուծության և պլանավորման տեսանկյունից՝ համարելով այն կառավարչական որոշումների կայացման անկյունաքարերից մեկը: Այս գլխում ատենախոսը ներկայացրել է նաև ռազմավարական հաշվառման համակարգի ներդրման հիմքում ընկած մեթոդաբանական հայեցակարգերի ընտրության կարևորությունը, որը կարող է ապագայում կանխորոշել կազմակերպության գործունեության ամբողջ ընթացքը: Հիշատակվել է նաև ռազմավարական հաշվառման համակարգում կիրառվող մեթոդների շրջանակը և հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ռազմավարական հաշվառման համակարգի ներառման գործընթացի իրականացման մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Ռազմավարական հաշվառման ներդրման մեթոդաբանական մեկնաբանումների շրջանակը»*** գլխում ներկայացվել և ուսումնասիրության է ենթարկվել ռազմավարական հաշվառման համակարգում օգտագործվող տեղեկատվական ապահովման համակարգը իր մոտեցումներով հանդերձ: Վերը նշված գործընթացները հիմնավորվել են դիտարկվող կազմակերպության ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ռեգրեսիոն վերլուծության միջոցով: Այս գլխում ատենախոսը դիտարկել է ռազմավարական և ֆինանսական հաշվառման համակարգերի միջև առկա ընդհանրությունները միմյանց հետ ինտեգրված տարբերակով կազմակերպություններում կիրառելու նպատակով: Միաժամանակ, ֆինանսական և ռազմավարական հաշվառման համակարգերում կիրառվող ցուցանիշների միջև առկա անուղղակի կապը ներկայացվել է ռեգրեսիոն վերլուծության տեսքով, որի հիման վրա կատարվել են առաջարկություններ երկու հաշվառման համակարգերի ինտեգրման ուղղությամբ: Այս գլխում ներկայացվել են այն երկու ուղղությունները, ըստ որի անհրաժեշտ է կյանքի կոչել կազմակերպություններում ռազմավարական հաշվառման ընթացակարգը, և այն կարևոր բաղադրիչները, որոնք պետք է հիմք հանդիսանան այդ ուղղություններում մշակման և վերլուծության ենթարկվող տեղեկատվության ներկայացման համար:

Ատենախոսության երրորդ՝ ***«Ռազմավարական հաշվառման համակարգը կազմակերպությունների կայուն զարգացման համատեքստում»*** գլխում ուսումնասիրվել են համակցված հաշվետվությունների ներկայացման մոտեցումները՝ ընդգրկելով ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները, և դրանց հիման վրա առաջարկվել են կազմակերպությունների գործունեության կայուն զարգացմանն ուղղված կառավարչական որոշումների կայացմանը առնչվող լուծումներ: Ատենախոսի կողմից ներկայացվել են համակցված կամ ինտեգրված ֆինանսական հաշվետվություններում ընդգրկվող նոր հոդվածները: Բացի այդ, ներկայացվել է այդ հոդվածների ճանաչման և չափման մոտեցումների սխեման, որը հեղինակը կառուցել է հաշվապահական հաշվառման պահանջներին և ընթացակարգերին համապատասխան: Այս ամենի համար

հիմք է ընդունվել նոր թողարկվող ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների՝ IFRS-S (sustainibility) սերիայով, և «բնապահպանություն-սոցիալական վստահություն-կառավարում» (ESG) շղթայի կողմից ներկայացվող պահանջները: Նաև, կազմակերպությունների գործունեության կայուն զարգացմանը հասցեագրվող ռեսուրսների և դրանցից ակնկալվող արդյունքների միջև առկա կապերն օգտագործելով, ստեղծել է կրկնակի գրանցմամբ թղթակցությունների իրականացման ռազմավարական հաշվառման համակարգ, որի գործնական կիրառությունը ներկայացվել է ՀՀ սննդի արդյունաբերության ոլորտի կազմակերպության համար կազմված համակցված կամ ինտեգրված ֆինանսական հաշվետվությունների միջոցով: Ատենախոսն այս հաշվետվություններում հրատարակված տեղեկատվության վերլուծական նշանակությունն ու կարևորությունը ներկայացնելու նպատակով առաջարկել է կիրառել որակական ցուցանիշներ:

«Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Ատենախոսությունն իրենից ներկայացնում է սննդի արդյունաբերության կազմակերպություններում ռազմավարական հաշվառման ներդրման մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված կազմակերպությունների կայուն զարգացման նպատակադրումների և հաշվապահական հաշվետվողական գործառույթների բարելավմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպություններում՝ նպաստելով կազմակերպությունների ռազմավարական գործառույթների արդյունավետության բարձրացմանը, տնտեսավարման կայուն զարգացման ու մրցունակության բարձրացմանը և նրանց կողմից իրականացվող կառավարչական որոշումների գործընթացի բարելավմանը:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այնուհանդերձ, աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից և բացթողումներից.

1. Ատենախոսության շրջանակներում որպես խնդիր է ներկայացվել ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների հեռանկարային նպատակադրումների կատարողականի և տնտեսական գործունեության կայուն զարգացման արդյունքների հիման վրա ռազմավարական հաշվառման ներդրման հայեցակարգի մշակումը (էջ 5): Սակայն ատենախոսության մեջ այդ նպատակադրման գծով խորքային գնահատումներ չեն տրվել: Ընդամենը գծապատկեր 2.3.1-ում (էջ 62) տրվել են կատարողականի հաշվառման փուլերը՝ առանց հետագա հայեցակարգային մեկնաբանությունների:
2. Ատենախոսության գծապատկեր 1.3.1-ի Կենիչի Օմաեի «ռազմավարական եռանկյունու» մոդելի (էջ 32) քննարկումը անհասկանալի է և գրեթե առնչություն չունի ներկայացվող նորույթներին: Այն առավելապես մրցակցային միջավայրի գնահատմանը և մարքեթինգի գործիքներին է առնչվում, այլ ոչ թե ռազմավարական զարգացման ուղղություններն է շոշափում: Ուստի կարծում ենք, որ այդ մոդելի ներկայացումը ծանրաբեռնում է հետազոտությունը և թիրախավորված չէ ատենախոսության նպատակներին:
3. Ատենախոսության մեջ ներկայացվող վիճակագրությունը սահմանափակվում է 2021 թվականի տվյալներով (աղյուսակներ 1.1.1, 1.1.2, 1.1.4, 1.2.1, 1.2.2, 1.2.3): Հետազոտությունը կշահեր, եթե դրանում թարմացվեր վիճակագրական հաշվետվությունը, և այդ տվյալների հիման վրա իրականացվեին վերլուծությունն ու որակական եզրահանգումները: Հատկապես, որ 2022 թվականի տվյալների հասանելիության հնարավորություն արդեն իսկ առկա է:
4. Հետազոտության մեջ ընդարձակ մեկնաբանություններ են ներկայացվել ռազմավարական հաշվառման վերաբերյալ՝ վերլուծելով տարբեր մասնագետների կարծիքները: Սակայն դրա հետ մեկտեղ ատենախոսը չի ներկայացրել ռազմավարական հաշվառման իր իսկ սահմանումը: Ատենախոսությունը կշահեր,

եթե ատենախոսը ներկայացներ ռազմավարական հաշվառման սեփական մեկնաբանումը և դրանից բխեցներ իր հետազոտական ուղղությունների հիմնավորումները, որն առավել ամբողջական կդարձներ ներկայացվող նորույթը:

5. Ատենախոսությունում անդրադարձ է կատարվել ծախսերի հաշվառման ABC, «թիրախային ծախսեր» և «ստանդարտ ծախսեր» մեթոդներին: Ատենախոսությունում այս մեթոդներին անդրադարձ է կատարվել միայն նկարագրության տեսքով որպես ռազմավարական հաշվառման գործիքակազմի տարատեսակ: Հետազոտությունը կշահեր, եթե ներկայացվեր ծախսերի հաշվառման այս մեթոդների կիրառությունը ռազմավարական հաշվառման համակարգում գործնական օրինակի տեսքով:
6. Ատենախոսությունում ներկայացված է կայուն զարգացման ինտեգրված հաշվետվողականության նոր հայեցակարգ (էջեր 94-100), որի արդյունքում վերափոխման են ենթարկվում կազմակերպությունների կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները: Սակայն, դրան զուգահեռ, շրջանցվում է կառավարչական հաշվառման հաշվետվողական համակարգը, և այդ ուղղությամբ առաջարկություններ չեն ներկայացվում: Հետազոտությունն առավել ամբողջական կլիներ, եթե ատենախոսն անդրադարձ կատարեր նաև կառավարչական ներքին հաշվետվությունների բարելավմանը՝ կայուն զարգացման ռազմավարական հաշվառման հայեցակարգում:
7. Հետազոտության արդյունքում առաջարկվել են կայուն զարգացման ներուժի գնահատման որակական ցուցանիշներ և դրանք կիրառվել են ընդամենը մեկ կազմակերպության՝ «Ալեքս Էնդ Հոլդինգ» ՍՊԸ-ի օրինակով (էջեր 102-107): Ատենախոսությունը կշահեր, եթե առաջարկվող նոր ցուցանիշները փորձարկվեին ՀՀ սննդի արդյունաբերության մի քանի կազմակերպությունների օրինակով, և դրա հիման վրա կատարվեին համեմատական գնահատումներ՝ որակական եզրահանգումներ ստանալու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողությունները չեն ազդում ատենախոսի կողմից իրականացրած հետազոտության արդյունքների վրա, և նպատակ են հետապնդել ատենախոսությունում ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպություններում ռազմավարական հաշվառման համակարգի կիրառման վերաբերյալ իրականացված առաջարկությունները և վերլուծությունները ծառայեցնելու իրենց վերջնական նպատակին:

Ամփոփելով կարելի է հավաստել, որ ատենախոս Գևորգ Հովիկի Մարտիրոսյանի կողմից կատարվել է արդիական, ծավալուն, տեսամեթոդական և կիրառական բնույթի հետազոտություն: Վերջինիս «Ռազմավարական հաշվառման ներդրման հիմնախնդիրները ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես պատշաճ մակարդակով կատարված ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ վեր են հանվել կազմակերպություններում ռազմավարական հաշվառման համակարգի կիրառման անհրաժեշտությունը և հնարավորությունները: Վերլուծության արդյունքում ատենախոսի կողմից առաջադրվել են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ:

Հետազոտության արդյունքները քննարկված են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված թվով 6 (վեց) գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատարակման պահին ընդունելի ու գրախոսվող հանդեսներում և ժողովածուներում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին ու ատենախոսության բովանդակությանը համապատասխան և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Գևորգ Հովիկի Մարտիրոսյանի՝ «Ռազմավարական հաշվառման ներդրման հիմնախնդիրները ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման

կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03–«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու
«Ստրատեգիուս» ՍՊԸ ֆինանսական տնօրեն՝ **Ս. Ռ. Միրզոյան**

Ս. Ռ. Միրզոյանի ստորագրության
իսկությունը հավաստում եմ
«Ստրատեգիուս» ՍՊԸ տնօրեն՝ **Ա. Ս. Գաբրիելյան**

«ՍՏՐԱՏԵԳԻՈՒՍ» "СТРАТЕГИУС" "STRATEGIUS" 01307828

24.08.2022թ.